

ՀԵԿՈՅՑ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ստորև կը հրատարակենք ներկայ տարւոյ առաջին վեցամսեային մէջ Հիմնարկութեան կողմէ կատարուած յատկացումները եւ ժառանգութիւնները ի նպաստ Հայկական գործերու: Ինչպէս պիտի տեսնուի, Հիմնարկութիւնն շարունակած է իր գործունէութիւնը կեդրոնացնել ուսումնական եւ մշակութային ծրագիրներու եւ դպրոցական ձեռնարկներու, ինչպէս եւ հանրային նկարագիր ունեցող բարեփոխական ձեռնարկներու վրայ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՆԵՐ

3. — Պատուոյ փոխտոնութիւն բարձրագոյն ուսումնեւ համար:

Պատուոյ փոխտոնութեան հիման վրայ, զանազան երկիրներու համալսարաններուն եւ բարձրագոյն վարժարաններուն մէջ հայ ուսանողներու կրթաթոշակներ յատկացնելու նպատակով Կեդր. վարչութիւնը հաստատեց 75.000 տոլարի հիմնադրամ մը, 1961-62 տարեշրջաւ նիւն համար: Սոյն գումարը սահմանուած է նախորդ տարեշրջաններուն մէջ ընտրուած ինչպէս եւ ներկայ տարեշրջանին մէջ ընտրելի պատուոյ թղթակառներուն:

2. — Կորաքոչակի յատկացում Դպրեվանքներու մէջ:

Ինչպէս ծանուցուած էր մեր վերջին Զեկոյցով, ըստ հայկական ուսումնարաններու ժառանգութեան ընդհանուր ծրագրին, Կեդր. վարչութիւնը կրթաթոշակներ յատկացուց ի նպաստ Դպրեվանքներու մէջ ուսանող աշակերտներուն: Նախորդ Զեկոյցով ծանուցուածներէն յետոյ կատարուեցան նաև հետևեալ յատկացումները, 4 տարուան համար, ի նպաստ որոշ թիւով աշակերտներու իւրաքանչիւր հաստատութեան մէջ.

ա. — Երևանյէմի Ժառանգաւորաց	10.000 տոլար
բ. — Ս. Խաչ Դպրեվանք — Սթամպուլ —	10.000 »
գ. — Միխիթարեան Ընծայարան — Վիեննայ —	6.000 »
դ. — Միխիթարեան Ընծայարան — Վիեննա —	6.000 »
ե. — Զմամոքի Ընծայարան	4.000 »
զ. — Հայ Աւետ. Աստուածաբ. վարժ. — Պէյրութ —	4.000 »
	40.000 տոլար

3. — Յատկացում Ս. Խաչ Լիտի — Սթամպուլ:

Կեդր. վարչութիւնը որոշեց նախորդ երկու տարեշրջաններուն այս հաստատութեան յատկացուած տարեկան 15.000 տոլարի ժառանգութիւնը շարունակել 1961-62 եւ 1962-63 տարեշրջաններուն եւ, եւ այս նպատակով քուէարկեց 30.000 տոլարի նոր յատկացում մը:

4. — Համալսարանական բացառիկ կորաքոչակ Պրագիլիոյ մէջ:

Հիմնարկութեան Պրագիլիոյ Ուսումնական Ցանձնաժողովին հետ համախորհուրդով Կեդր. վարչութիւնը 2.500 տոլարի բացառիկ կրթաթոշակ մը սահմանեց որ պիտի յատկացուի պրագիլահայ համալսարանականի մը: Այս յատկացումը որ ներկայիս մէկ տարուան եւ մէկ անգամուան համար կատարուած է եւ փորձառական հանգամանք ունի, պիտի տրուի թեկնածուի մը որ փայլուն յաջողութեամբ աւարտած է համալսարանական ուսումը եւ կը փափաքի կատարելագործել իր մասնագիտութիւնը:

5. — Յատկացում Գալիճորեցի Համալսարանին Պետրիի ճիւղին հայկ. գրադարանին:

Կեդր. վարչութիւնը 5.000 տոլարի յատկացում մը կատարեց ի նպաստ Գալիճորեցի Համալսարանին Պետրիի հիւսկական գրադարանին: Սոյն գումարով պիտի գնուին հայերէն եւ հայագիտական գիրքեր նոյն հաստատութեան հայկական գրադարանին համար:

6. — Ժողէ Պօնիճաղի Վարժարանին Գալիճորեցի համար:

Սոս ֆաւրի — Գրադիլիա — Ժողէ Պօնիճաղի հայ վարժարանին կազմածներուն վերահսկողութեան համար յատկացուեցաւ 3.555 տոլար:

7. — Մուսաղլէի Պարթարբարանի Ցպարանին համար:

Երևանյէմի Պարթարբարանի ցպարանին յատկացուեցաւ 20.300 տոլար, նոր տողաշար մեքենայի մը գնման համար:

9. — Վիեննայի Միխրաբեան Ցգարանին համար:

Վիեննայի Միխրաբեան Միաբանութեան յատկացուեցաւ 20.100 տուլար, նոր տողաշար մեքենայի մը գնման համար:

9. — Մանկավարժական տնտեսային դասընթացի մը համար — Սեւո, Ֆրանսա:

Նարունակելով անցեալ տարի Սփիւռքի հայ երկրորդական վարժարաններու տնօրէններու համար գործադրուած ծրագիրը, որոշուեցաւ որ այս տարի ևս Սեպտեմբեր ամսուն հայ նախակրթարաններու 12 տնօրէններ մասնակցին Սեւո — Ֆրանսա — Մանկավարժական Միջազգային կեդրոնին ամառային դասընթացին: Այս նպատակին համար կեդր. վարչութիւնը յատկացուց 6.000 տուլար:

10. — Պաղատի Հայոց Առաջնորդարանին:

Պաղատի Սրբոց Թարգմանչաց վարժարանին վերաշինութեան համար նախապէս յատկացուած 28.000 սթերլինն իրայ կեդր. վարչութիւնը կատարեց 2250 սթերլին — 6300 տուլար — յաւելում մը, ըստ շինութեան ընդարձակեալ ծրագրին:

ՐԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ**11. — Նորագոյնիւններ Մուսաղէմի Պատրիարքարանին մէջ:**

Արկածի հետեւանքով երուսաղէմի Պատրիարքարանին խոհանոցը և սեղանատունը փլուզումի ենթարկուած ըլլալով, Հիմնարկութիւնը մասնակցեցաւ անհրաժեշտ վերանորոգման ծախքերուն 4500 տուլարի օժանդակութեամբ մը:

12. — Մուսաղէմի գաղականներուն համար:

Հիմնարկութիւնը 11.200 տուլարի օժանդակութիւն մը յատկացուց երուսաղէմի Պատրիարքարանին մէջ պատուարուած հայ գաղթականներու պարենաւորման ծախքերուն, 1961 — 62 տարեշրջանին համար:

13. — Ս. Փրկիչ Հիւանդանոցին համար — Սթամբուլ:

Սթամբուլի Ս. Փրկիչ Հիւանդանոցը Ռէօնթէկէնեան նոր գործիքով մը և Ռատիօնքօփի նոր կազմանքով օժտելու նպատակով Հիմնարկութիւնը կատարեց 23.000 տուլարի յատկացում մը ի նպաստ այս հաստատութեան:

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ**14. — Ազունիէի — Լիբանոն — Բուժարանին համար:**

Ազունիէի Բուժարանին կից հետախուզական կեդրոնի մը կառուցման համար Հիմնարկութիւնը կատարեց 4.000 տուլարի յաւելումական յատկացում մը:

ԸՆԴՀ. ԳՈՒՄԱՐ 1961ի Ա. ՎԵՑԱՄՍԵԱՑԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ

1. — Համալսարանական պատուոյ փոխառուութեանց համար	Տուլար	75.000
2. — Դպրեվանքերու կրթութեան	»	40.000
3. — Ս. Խաչ Լիսէին	»	30.000
4. — Համալսարանական բացառիկ կրթութեան — Պրազիլիա —	»	2.500
5. — Գէօրգիի Համալսարանի գրադարանին	»	5.000
6. — Ժօզէ Պօնիֆատիօ վարժարանի սարքաւորման	»	3.555
7. — Երուսաղէմի Պատրիարքարանի տպարանին	»	20.300
8. — Վիեննայի Միխրաբեան տպարանին	»	20.000
9. — Մանկավարժական դասընթաց — Սեւո —	»	6.000
10. — Պաղատի Առաջնորդարանին	»	6.300
11. — Նորագոյնիւններ երուսաղէմի Պատրիարքարանին մէջ	»	4.500
12. — Երուսաղէմի գաղթականներու պարենագին	»	11.200
13. — Ս. Փրկիչ Հիւանդանոցին համար կազմանք	»	23.000
14. — Ազունիէի Բուժարանին	»	4.000
		251.355

Մինչև 31 Դեկտ. 1960 կատարուած յատկացումներու գումար

2.800.425

Մինչև 1 Յուլիս 1961 կատարուած յատկացումներու ընդհ. գումար

3.051.780